ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 5-Ա

<<15>> փետրվարի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ <<ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 90-Ա որոշումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ-11	Դեմ – 0	Ձեռնպահ –0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<15>> փետրվարի 2024 թ.
քաղաք Մարալիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 15-ի N 5-Ա որոշման

Կազմված է _____ Տպագրված է՝ Ընդամենը 4 /չորս/ օրինակ Բաղկացած է՝ 11 /տասնմեկ/ թերթից Օրինակ --------- Հաստատված է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 5-Ա որոշմամբ: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ _____ Ա. Սարիբեկյան	Գրանցված է Հայաստանի Հանրապետություն Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Գյումրի տարածքային բաժնի կողմից Գրանցման ամսաթիվ---------- Գրանցման համար---------- Վկայականի համար---------- ՀՎՀՀ---------- ---- ---- ---------թ-ին գրանցված Կանոնադրություն թիվ ------- Փոփոխությունը Գրանցվել է Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից << >> փետրվարի 2024 թ. ---------- Ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ «ԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի «Անի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն համալիր մարզադպրոցը (այսուհետ՝ Մարզադպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ուսումնամարզական գործունեություն իրականացնող համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ իրեն ամրագրված իրավունքներ և պարտականություններ:

2. Մարզադպրոցի հիմնադիրը Անի համայնքն է՝ ի դեմս համայնքի ավագանու: Մարզադպրոցը ստեղծված է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման պահից՝ առանց ժամկետային սահմանափակման: Մարզադպրոցի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի «Անի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորվել և հանդիսանում է Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց բյուջետային հիմնարկի (գրանցման համարը՝ 48.0043, վկայական՝ Բ000006, գրանցման ամսաթիվ՝ 1997-04-03) իրավահաջորդը և նրան են փոխանցվում Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց բյուջետային հիմնարկին ամրակցված գույքը: Կազմակերպության իրավաբանական հասցեն է ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Հաղթանակի փողոց /S/ 41, փոստային ինդեքս 2901:

4. Մարզադպրոցը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Մարզադպրոցը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան և իր խնդիրները լուծելու նպատակով առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

6. Մարզադպրոցը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

7. Մարզադպրոցը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

8. Մարզադպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվներ:

9. Մարզադպրոցը իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

10. Մարզադպրոցի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Անի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

հայերեն կրճատ՝ «Անի մարզադպրոց» ՀՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ «Анийская комплексная спортивная школа» общественная некомерческая организация:

ռուսերեն կրճատ՝ «Анийская спортшкола» ОНО

անգլերեն լրիվ՝ «Ani complex sport school » Community non commerssial organization

անգլերեն կրճատ՝ «Ani Sport s school»

Մարզադպրոցի գտնվելու վայրն է՝ Հաղթանակի փողոց / S/41 Մարալիկ 2901 Անի Շիրակ Հայաստան

II. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

11. Մարզադպրոցի գործունեության հիմնական նպատակներն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով պարապողների առողջության պահպանումը և ամրապնդումը, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու քաղաքացու համակողմանի ձևավորումը,

2) ընտրած մարզաձևում պարապողների մարզական ընդունակությունների կատարելագործումը,

3) հատուկ մարզական պատրաստության միջոցով Հայաստանի Հանրապետության ազգային հավաքական թիմերի համար հերթափոխի պատրաստումը և համալրումը,

4) սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ստեղծումը, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների գեղագիտական, ֆիզիկական զարգացումը,

5) հանրակրթական դպրոցների հետ սերտ կապի հաստատումը, ֆիզկոյտուրային-արտադասարանական աշխատանքների, ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպման օժանդակումը:

12. Մարզադպրոցի գործունեության առարկան համապատասխան ուսումնական ծրագրերի պահանջների իրականացումն է՝ կառավարման միասնական մոդելի ներդրման միջոցով:

13. Մարզադպրոցում գործում են սկզբնական պատրաստականության, ուսումնամարզական, մարզական կատարելագործման և մարզական բարձրագույն վարպետության խմբեր:

14. Մարզադպրոցի աշխատանքի հիմնական ցուցանիշ է համարվում՝

1) պարապողների խմբի կայունության պահպանումը,

2) վարպետ թիմերի և ազգային հավաքական թիմերի, օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջների համալրումը,

3) օլիմպիական, աշխարհի, Եվրոպայի առաջնությունների և այլ միջազգային մրցաշարերի մասնակից մարզիկների պատրաստումը:

15. Մարզադպրոցի ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին: Մարզադպրոցը գործում է ամբողջ տարվա ընթացքում՝ ապահովելով առնվազն 51-52 շաբաթվա համար նախատեսված շուրջամյա մարզումներ, որոնցից հինգից վեց շաբաթը (համապատասխան միջոցներ ունենալու դեպքում)՝ ամառային և ձմեռային սպորտային և առողջարարական ճամբարային պայմաններում: Մարզադպրոցի համակազմի և ուսումնական խմբերի հրամանագրումը կատարվում է ամեն տարի՝ մինչև հոկտեմբերի 1-ը:

16. Մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացը կառուցվում է առանձին մարզաձևերի ուսումնական ծրագրերի պահանջների հիման վրա:

17. Մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացի հիմնական ձևերն են խմբակային ուսումնամարզական և տեսական պարապմունքները, աշխատանքն անհատական պլանով, բժշկա-վերականգնողական միջոցառումները, մասնակցությունը մրցումներին, հավաքներին և մարզական-առողջարարական ճամբարներին:

18. Մարզադպրոցը կարող է կազմակերպել հետևյալ ուսումնամարզական հավաքները՝

1) հանրապետական մրցումների նախապատրաստական հավաքներ,

2) միջազգային մրցումների նախապատրաստական հավաքներ,

3) ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստականության հավաքներ:

19. Մարզադպրոցն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով միջազգային կապեր հաստատելու օտարերկրյա մարզական կազմակերպությունների հետ, կազմակերպելու մարզական պատվիրակությունների փոխայցելություններ, համատեղ միջոցառումներ:

20. Մարզադպրոցը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) լրացուցիչ մանկավարժական, ֆիզկուլտուրային-առողջարարական ծրագրերի իրականացում, սովորողների և աշխատողների հանգստի կազմակերպում,

2) ճամբարների կազմակերպում:

III. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

21. Մարզադպրոցի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

22. Մարզադպրոցի հիմնադիրն ունի Մարզադպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

23. Մարզադպրոցի հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Մարզադպրոցի հիմնադրումը,

2) Մարզադպրոցի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

3) Մարզադպրոցի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

4) Մարզադպրոցի վերակազմակերպումը և լուծարումը,

5) Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

24. Համայնքի ղեկավարը իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

25. Համայնքի ղեկավարն ունի հետևյալ լիազորությունները՝

1) Մարզադպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

2) վերահսկողություն է իրականացնում Մարզադպրոցի գործունեության նկատմամբ,

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Մարզադպրոցի գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները

4) լսում է Մարզադպրոցի գործունեության մասին հաշվետվություններ, քննում Մարզադպրոցի գործունեության վերստուգման արդյունքները,

5) վերահսկողություն է իրականացնում Մարզադպրոցին ամրացված պետական կամ համայնքային սեփականության գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,

6) վերահսկողություն է իրականացնում Մարզադպրոցի սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ Մարզադպրոցի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

7) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Մարզադպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ,

8) հաստատում է Մարզադպրոցի տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

9) հաստատում է Մարզադպրոցի կառուցվածքը և աշխատողների թիվը,

10) սահմանում է մարզական խմբերում պարապողների նվազագույն թիվը՝ ըստ պատրաստության փուլերի:

26. Մարզադպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը (տնօրենը), որը նշանակվում և ազատվում է Մարզադպրոցի լիազորված պետական մարմնի կողմից: Մարզադպրոցի տնօրենը ղեկավարում է Մարզադպրոցի գործունեությունը և պատասխանատվություն կրում Հայաստանի Հանրապետության օրենքները, իրավական այլ ակտերը, հիմնադրի որոշումները, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ թերի կատարելու համար:

27. Մարզադպրոցի գործադիր մարմինը (տնօրենը)՝

1) Պետք է ունենա Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և բարձրագույն կրթություն:

2) առանց լիազորագրի հանդես է գալիս Մարզադպրոցի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ,

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Մարզադպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

4) տալիս է Մարզադպրոցի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,

5) աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է Մարզադպրոցի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

7) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

8) սահմանում է Մարզադպրոցի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը,

9) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

10) իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար՝

ա. վերահսկողություն է իրականացնում Մարզադպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

բ. ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

գ. կազմում է Մարզադպրոցի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում Մարզադպրոցի լիազորված պետական մարմնի հաստատմանը,

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և այլ գործառույթներ,

12) հաստատում է Մարզադպրոցի մասնաճյուղերի կանոնադրությունը:

28. Մարզադպրոցի տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Մարզադպրոցին պատճառված վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու, պարտականությունները չկատարելու համար:

29. Մարզադպրոցի տնօրենը պարտավոր չէ կատարել հիմնադրի՝Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

30. Մարզադպրոցի տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որով սահմանվում են Մարզադպրոցի տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, աշխատանքային պայմանագրի դադարման հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերն անհրաժեշտ կգտնեն: Աշխատանքային պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջներին:

31. Մարզադպրոցի տնօրենի բացակայության դեպքում տնօրենի լիազորություններն իրականացնում է նրա տեղակալը:

32. Մարզադպրոցի տնօրենի լիազորությունները դադարեցվում են՝

1) իր դիմումի համաձայն.

2) եթե լրացել է 65 տարին,

3) իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի,

4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի,

5) երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի,

6) նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել հետևյալ հանգամանքները՝

ա) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,

բ) օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել,

գ) նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իր պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար,

7) իր գործառույթներն իրականացնելիս Մարզադպրոցին, պետությանը կամ համայնքին իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է Մարզադպրոցին սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը,

8) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,

9) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը,

10) զրկվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից,

11) նրա ղեկավարած Մարզադպրոցը դատական կարգով ճանաչվել է սնանկ կամ ունի դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո վեց ամսվա ընթացքում իր մեղքով չկատարված գույքային պարտականություն,

12) Մարզադպրոցի կողմից վճարման ենթակա հարկերը կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարները սահմանված ժամկետից հետո իր մեղքով հաշվետու ժամանակաշրջանում չեն վճարվել,

13) մեկ տարվա ընթացքում ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

33. Մարզադպրոցի ուսումնական գծով փոխտնօրենը (այսուհետ՝ ուսմասվար) աշխատանքի է նշանակվում և աշխատանքից ազատվում Մարզադպրոցի տնօրենի կողմից, պետք է ունենա ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի բարձրագույն կրթություն և մարզչական աշխատանքի առնվազն հինգ տարվա աշխատանքի փորձ: Ուսմասվարը պատասխանատվություն է կրում ուսումնամարզական գործընթացի կազմակերպման, ուսումնական փաստաթղթերի վարման, ուսումնական խմբերի ճիշտ համալրման (կոմպլեկտավորում), մարզիչ-մանկավարժների որակավորման բարձրացման համար: Ուսմասվարն իրականացնում է վերահսկողություն ուսումնամարզական գործընթացի անցկացման, պարապողների կողմից ծրագրային նյութի յուրացման նկատմամբ:

34. Մարզադպրոցի տնտեսական հարցերի գծով փոխտնօրենը աշխատանքի է նշանակվում և աշխատանքից ազատվում տնօրենի կողմից: Մարզադպրոցի տնտեսական հարցերի գծով փոխտնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա մեջ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ:

35. Մարզադպրոցի ավագ հրահանգիչ-մեթոդիստը և հրահանգիչ-մեթոդիստը պետք է ունենան բարձրագույն մասնագիտական կրթություն, առնվազն երեք տարվա մարզչական աշխատանքի փորձ:

36. Մարզադպրոցի ավագ հրահանգիչ-մեթոդիստը և հրահանգիչ-մեթոդիստը պատասխանատվություն են կրում մարզական գործընթացի կազմակերպմանը, մարզիչ-մանկավարժների աշխատանքի առաջավոր փորձի ընդհանրացմանը վերաբերող մեթոդական աշխատանքների կազմակերպման համար: Նրանք պատասխանատվություն են կրում նաև դաստիարակչական աշխատանքների և մարզիչ-մանկավարժներին մասնագիտական գրականությանը, մեթոդական հանձնարարականներին հաղորդակից դարձնելու համար:

37. Մարզադպրոցի տնօրենին, ուսմասվարին, ավագ հրահանգիչ-մեթոդիստին և հրահանգիչ-մեթոդիստին թույլատրվում է նույն դպրոցում հիմնական աշխատանքի ժամերի ընթացքում վարել մարզչական աշխատանք 0,5 դրույքի չափով: Վճարումն իրականացվում է մարզիչ-մանկավարժի դրույքի հաշվարկով:

38. Մարզադպրոցի մարզչական-մանկավարժական կազմը, որպես կանոն, համալրվում է ֆիզկուլտուրայի կրթություն ունեցող մասնագետներից: Մարզիչ-մանկավարժն իրականացնում է՝

1) մարզական վարպետության հետագա բարձրացման համար պարապողների միջից հեռանկարային երեխաների ընտրությունը.

2) ուսումնամարզական գործընթացի կազմակերպումը՝ ուսումնական ծրագրի համաձայն,

3) պարապմունքների հաճախումների հաշվառումը:

39. Մարզիչ-մանկավարժը պատասխանատվություն է կրում մարզական գործընթացի անվտանգության ապահովման համար, հսկողություն է սահմանում պարապողների նկատմամբ՝ տարատեսակ խթանիչներ չընդունելու համար:

40. Մարզադպրոցի տնօրենի հրամանով նշանակվում են բաժանմունքի ավագ մարզիչ-մանկավարժներ, եթե տվյալ բաժանմունքն ունի առնվազն երեք մարզիչ-մանկավարժի հաստիք:

41. Մարզադպրոցի ավագ մարզիչ-մանկավարժը, բացի մարզիչ-մանկավարժի պարտականություններից, պատասխանատվություն է կրում նաև բաժանմունքի մարզական գործընթացի ծրագրման (պլանավորման), աշխատանքի առաջավոր մեթոդների ներդրման, ծրագրային պահանջների վերահսկման, բաժանմունքի միջոցառումների կազմակերպման ու անցկացման համար:

42. Մարզադպրոցի պարապողների բժշկական սպասարկումն իրականացվում է բժշկական անձնակազմի միջոցով:

IV. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

43. Մարզադպրոցի սեփականությունը ձևավորվում է Մարզադպրոցի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Մարզադպրոցի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

44. Մարզադպրոցն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

45. Հիմնադիրը սեփականության իրավունքով Մարզադպրոցին պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ Մարզադպրոցի լուծարումից հետո մնացած գույքի:

46. Մարզադպրոցի սեփականության պահպանման հոգսը կրում է Մարզադպրոցը:

47. Մարզադպրոցի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

48. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից Մարզադպրոցին ամրացված գույքը:

49. Մարզադպրոցն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Մարզադպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ Մարզադպրոցի կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները Մարզադպրոցի սեփականությունն են: Մարզադպրոցին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

50. Մարզադպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

51. Մարզադպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքի բյուջեով նախատեսված միջոցների հաշվին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ հետևյալ աղբյուրներից՝

1) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և սույն կանոնադրությանը չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

52. Մարզադպրոցի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի:

53. Մարզադպրոցի շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական վիճակի բարելավմանը:

54. Մարզադպրոցը վճարում է հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները՝ ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

V. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

55. Մարզադպրոցի կրթա-դաստիարակչական գործընթացի մասնակիցները, որպես կանոն, մինչև 18 տարեկան պարապողներն են, ինչպես նաև կատարելագործման խմբում ընդգրկված 19-22 տարեկան երիտասարդները, նրանց ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

Մարզադպրոցում գործելու են ուսումնամարզական հետևյալ խմբերը.

- Նախնական պատրաստություն
- Ուսումնամարզական
- Մարզական կատարելագործման

56. Երեխաների ընդունելության ժամանակ Մարզադպրոցի տնօրենությունը պարտավոր է ծնողներին (նրանց օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել Մարզադպրոցի կանոնադրությանը և այլ փաստաթղթերին, որոնք կանոնակարգում են Մարզադպրոցի գործունեությունը: Երեխաների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով ու Մարզադպրոցի ներքին կարգապահական կանոններով:

57. Պարապողների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են Մարզադպրոցի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

58.Մարզադպրոցի անձնակազմի համալրման կարգը կանոնակարգվում է սույն կանոնադրությամբ:

59. Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր, ըստ մասնագիտության, ունեն անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

60. Մարզադպրոցի մանկավարժն իրավունք ունի մասնակցելու Մարզադպրոցի կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

61. Մարզադպրոցի մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

62. Մարզադպրոցի մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթա-դաստիարակչական ծրագրերի կատարումը:

63. Մարզադպրոցում արգելվում է պարապողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

64. Պարապողների հետ իրավահարաբերությունները կարգավորում են պայմանագրային հիմունքներով՝ հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1) բարեխղճություն,
2) Մարզադպրոցի գույքի նկատմամբ խնամքով վերաբերմունք,
3) Մարզադպրոցի պարապողների և աշխատողների իրավունքների ու արժանապատվության նկատմամբ հարգանք,
4) Մարզադպրոցի ներքին կարգապահական կանոնների պահպանում:

65. Մարզադպրոցի պարապողների իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, սույն կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

VI. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

66. Մարզադպրոցը պարտավոր է ունենալ հետևյալ փաստաթղթերը՝

- ✓ Սովորողների ցուցակ՝ հաստատված տնօրենի հրամանով,
- ✓ Մարզադպրոցի հրամանագիրք,
- ✓ Դասամատյաններ՝ ըստ առանձին խմբերի,
- ✓ Ուսումնամարզական խմբերի պարապմունքների պլան-գրաֆիկ,
- ✓ Սպորտային միջոցառումների օրացուցային պլան,
- ✓ Սովորողների անձնական գործեր, բժշկական քարտեր,
- ✓ Աշխատողների անձնական գործեր,
- ✓ Տարիֆիկացիոն ցուցակ,
- ✓ Նիստերի արձանագրությունների մատյան,
- ✓ Անցկացրած մրցումների արձանագրությունների մատյան:

67. Մարզադպրոցը յարաքանչյուր տարի հիմնադիր կազմակերպությանը, մարզի համապատասխան բաժիններին, ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը ներկայացնում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հաստատված վիճակագրական հաշվետվությունը՝ համաձայն պահանջվող ձևի և ժամկետի:

VII. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

68. Մարզադպրոցը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

69. Մարզադպրոցը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**